ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

ԿՈԽԻ ԳԻՒՏԻ ԱՌԱՋԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

ԲԵՐԼԻՆ, 17 Նոյեմբերի (Նոր տոմար)։ Երէկ, 16 Նոյեմբերի գաղտնի բժշկական խորհրդական պրոֆ. դ-ր ֆոն Բերգման, խիրուրգների «Աղատ ժողովի» մէջ, իւր կլինիկայում դասախօսութիւն արաւ Կոխի դեղի մասին։ Լսել ցանկացողների թիւը, թէ արտասահմանից ե թէ բնիկներից այնքան մեծ էր, որ լսողների թիւը պէտք էր սահմանափակել։ Ներկայ էին լուսաւորութեան մինիստր դ-ր ֆոն Գոսլէր, գաղտնի խորհրդական պրոֆ. դ-ր ֆոն Ցիմսէն Միւնխենից, գաղտնի բժշկ. խորհրդական պրոֆ. դ-ր Ֆիրխով և Բերլինի ուրիշ բժշկական պրոֆեսորները, գլխաւոր շտաբի բժիշկ դ-ր ֆոն Կոլեր, գաղտնի խորհրդական դ-ր ֆոն Կիրշենտաչ-նէր Միւնխենից և այլն։ Ներկայ եղող անգլիական բժիշկները իրանց հետ բերել էին մի լուսաւոր-հիւանդի։ Բերգմանը սկսեց իւր խօսքը յայտնելով շնորհակալութիւն և հիացմունք Կոխին։ Հիպոկրատից և Գալէն'ից դէս ոչ ոք չի հեաազօտել տուբերկուլոզային հիւանդութեան պատճառները և բոլոր և նորա բուժելը ապահովացրել. Կոխը երևում է որ մի բժիշկ է, որին վիճակուած է այդ յաղթութիւնը։ Կոխը թոյլ է տուած նրան (Բերգմանին) այսօր փորձեր ցոյց տալ, որ ինքը Կոխը արել է։ Ոչ մի հնար չի եղել համոզելու, որ ինքը Կոխը ներկայ գտնուի ժողովին։ Բերգմանը ներկայացրեց մի շարք հիւանդներ, որոնք Կոխի եղանակով խնամուել են։ Նախ նա ցոյց տուեց լուսաւոր-հիւանդների բժշկելու մի քանի ստադիաների (չրջանների) մէջ։ Նոքա բոլորը 10 տարուց ի վեր առանց հետևանքի և բոլոր միջոցներով բժշկուում են եղել։ Կոխի եղանակի կրկնակի ներգործութիւնը՝ ընդհանուրը և յատուկը-իւրաքանչիւր հիւանդի վերայ նկատելի էր, որպէս նաև սկսող և լաւացնող բժշկութիւնը։ Յետոյ ցոյց տուեց Բերգմանը տուբերկուլոզային սկրոֆուլոզի երկու դէպքեր, 18 դէպք լօղերի և ոսկորների տուբերկուլոզի և 3 դէպք խուչափոզի (կոկորդ) տուբերկուլոզի։ Դասախօսութեան վերջում Բերգման նորից յայտնեց պատուական բժիշկների ժողովի կողմից շնորհակալութիւն մեծ հետազօտողին՝ իւր գիւտի համար։

ՎԻԵՆՆԱ, 14 Նոյեմբ. Այսօրուայ իւր դասախօսութեան սկզբում յայտնեց պրոֆ. Նոթնագել ամենափառաբանական կերպով Կոխի նոր՝ բժշկական եղանակի մասին, որը իբր դարուս և բժշկական գիտութեան զուլթիւնից դէս ամենամեծ գործն է։ Կոխի անունը լինելու է մեր դարու ամենատօնուածներից մէկը։ Այս խօսքերին յաջորդեցին լսողների երկարատև կեցցէները։ Նաև պրոֆ. Բիլրոթ'ը առիթ գտաւ իւր այս օրուայ դասախօսութեան միջոցին՝ Կոխի բժշկական եղանակի մասին ամենայնորհակալական և գովասանական խօսքերով արտայայտուելու և աւելացրեց՝ «Մի չը սպասուած պերսպեկտիւ է բացւում. բժշկականութեան բոլոր ճիւղերը շահ կը ստանան այս հանճարեղ գիւտից»։

ՎԻԵՆՆԱ, 14 Նոյեմբ.—Այսօրուայ մի դասախօսութեան մէջ պրոֆես. Նոթնագել ասաց, թէ նա կանգնած է բժշկականութեան ամենամեծ յաղթութիւններից մէկի առջև։ Կոխի արած գործը կարող է համեմատուել միայն Ջենների ծաղկի պատուաստման հետ։ Նաև պրոֆ. Բիլրոթ խօսեց այսօր Կոխի բժշկական եղանակի մասին։ Չը սպասուած հորիզոն է բացւում։ Խիրուրգի համար ցայժմ չը լուծուած խնդիր էր՝ թոքերի խոռոչները բացել։ Եթէ իրաւ Կոխի դեղի ներմուծութիւններով բացիլները կը սպանուեն (մի բան, որ Կոխի ասելով չի կատարւում, ծանոթ. խմբ.), այն ժամանակ խիրուրգը կարող է առանց վտանգի հիւանդի համար խոռոչները բացել։ Բիլրոթը համոզմունք է յայտնում, որ նաև քաղցկեղի (ռակ) բուժելը միայն ժամանակի խնդիր է։

ԲԵՐԼԻՆ, 17 Նոյեմբ.—Երեկ փորձեր կատարուեցին 5 լուպուս-հիւանդների վերայ, որոնք ներմուծութիւններ ստացան. ամենքի մօտ ջերմ և բորբոքումն եղաւ. պրոֆ. Բերգմանն յայտնեց, որ արդէն այս անվրէպ ապահովութիւնը, թէ Կոխի դեղով ջերմ և գողոց է առաջանում, դեղին տալիս է կատարեալ բժշկական նշանակութիւն։ Հիւանդներից երեքը Կոխի եղանակով արդէն խնամուել են. նոքա ամենքը ներմուծութիւններ են ընդունել, որոնք դնալով նուազ ընդդիմադրական երևոյթներ էին յառաջացնում։ Դեղը գործ է ածւում մինչև որ ջերմը չը նորոգուի։ Բերգմանը յայտնեց, որ քաղցկեղի (ռակ) վերայ Կոխի դեղը չի ներգործում և քանի որ քաղցկեղը խուչափողում շատ հեշտութեամբ տուբերկուլոզի հետ չփոթել կարելի է, այդ պատճառով Կոխի դեղը լաւ դիագնոստական միջոց է տուբերկուլոզը քաղցկեղից (ռակ) որոշելու։ Եթէ ընդդիմադրութիւն (ռէակցիա) չեղաւ՝ նշանակում է քաղցկեղ է և ոչ տուբերկուլոզ։

ԲԵՐԼԻՆ, 18 Նոյեմբ.—Բերլինի լրագիրները մանրամասն տեղեկութիւններ են տալիս պրոֆ. Բերգմանի դասախօսութեան մասին, որ նա կարդաց իւր կլինիկայում «Ազատ ժողովի» մէջ։ Այդտեղ 39 պացիենտներ առաջ բերուեցին, որոնք մեծ մասամբ լուպուսով, լօգերի տուբերկելներով և առհասարակ արտաքին հիւանդութիւններ ունէին։ Ներմուծութիւնները (դեղը կաշի տակով ներս սրսկելը) կատարեց դոքտոր Պֆուհլ. չափահաս

հիւանդները այդ միջոցին իրանց հանգիստ պահեցին, միայն երեխաները գանգատաւոր ձայներ լսեցրին։ Բերդմանի ասելով, Կոխի գիւտը թոյլ է տալիս որոշել տուբերկուլների գոյութիւնը։ Նաև անկասկած է, որ Կոխի բժշկական եղանակը նաև արտաքին հիւանդութիւնների վերայ լաւ է ազդում, բայց բուժելու եղանակը ընդհանրապէս և հարկաւոր դիտողութիւնները դեռ վերջացրած չեն։ Ինչ վերաբերում է ներքին հիւանդութիւնների, օրինակ՝ թոքերի բուժելուն, Բերդմանը նկատեց, որ դեռ անորոշութիւն կայ։ Վտանգ կայ, որ դեղի գործածութեամբ՝ հիւանդը չը խեղդուի, եթէ բաժանուած թոքի մասերը չնչափողի և կոկորդի մէջ պինդ նստեն։ Խուչափոդում հիւանդին մէկի վերայ Կոխի բուժելու եղանակը նոյնպէս ներդործեց, որպէս արտաքին հիւանդութիւնների վերայ. ջոկուած կաշին յաջողութեամբ դուրս նետուեց հաղալով։ Թէ արդեօք նոյնը կը լինի աւելի խորը ներքին հիւանդութիւնների դէպքում, դեռ հաստատ չէ։ Փորձերը շարունակեցին։

ԲԵՐԼԻՆ, նոյեմբ.—Պրոֆեսոր Կոխի բակտերիոլոգիական հետազօտութիւնների երկարամեայ աշխատակիցը, պրոֆ. Ֆրենցել (Fräntzel), երէկ բժիշկների մի մեծ աուդիտորիումի առջև դասախօսեց այն փորձերի մասին, որ Կոխի բուժական եղանակով կատարուել են թոքերի բարակացաւտների վերայ, և հաղորդեց, որ ծանր դէպքերում նշանաւոր բարելաւութիւն, միջակ և թեթև դէպքերում՝ կատարեալ առողջութիւն է յառաջացել։ Պացիենտների գանգատները կամաց-կամաց դադարում են, սնունդի դրութիւնը լաւանում է և բացիլները խորխի մէջ անյետանում են.

ԲԵՐԼԻՆ, 18 նոյեմբ.—Առաջին զեկուցումը «Դոքտոր Կոխի միջոցի մասին տուբերկուլոզը բուժելու համար» հրատարակելու է վաղը իբր արտակարգ հրատարակութիւն „Deutsche Mediciniche Wochenschrift“ (գերմանական բժշկական շաբաթաթերթ) թերթի, որ հրատարակում է դ-ր Գուտմանը՝ Գէորգ Թիմէ'ի (Բերլին և Լայպցիգ) տպարանում։

ՊԱՐԻԶ, 16 նոյեմ.—Թերթերը աշխոյժով զբաղուում են Կոխի գիւտով։ «Soleil» լրագիրը հարցմունք արաւ Դիւժարդէն—Բօմէց և Վերնեսլ'ի մօտ։ Դիւժարդէն—Բօմեց կարծիք յայտնեց, որ անկարելի է փչացած ոսկորները և թոքերը վերականգնել։ Արդէն զարմանալու արժանի յաջողութիւն է, եթէ մարմնի այն մասերը, որոնք միկրոբներից վտանգուած են, ոսոցա յարձակումներից պաշտպանուեն։ Իւր կարծիքով, Կոխի միջոցը կայանում է միկրոբներին զատելու մէջ, միացած ոսկու-ցինարի հետ։ Կոխը այս դէպքում գործ է դնում միայն Պաստեորի մեթոդը, որի վերայ նա առաջ յարձակուում էր։

Eclair լրագիրը առաջ է բերում Կորնիլ, ժերմէն Սէ և Գրանշէ'ի կարծիքները։ Կորնիլ մեծ հաւատ ունի դէպի գիւտը և գտնում է որ մինչ այժմեայ հետևանքները խրախուսիչ են, բայց կարծում

է, թէ Կոխի միջոցը միայն վերականգնեցնում է ջնաստած հիւսուածքները, բայց չէ սպանում բացիլներին և կարելի է որ բացիլը իւր կործանիչ ներգործութիւնը յետոյ նորից սկսի։ Կոխը, ասում է նա, բաժանում է բարակացաւտներին՝ նոր հիւանդացածների, թոքերում դեռ խոռոչ չունեցողների և մեծ խոռոչներ ունեցողների։ Եթէ, ինչպէս Կոխը հաւատացնում է, նրան յաջողուել է գէթ առաջիններին բժշկել, այդ էլ մինչ այժմ եղած ամենամեծ գիւտերից մէկը պէտք է համարել։ Մինչև այժմ 100 բարակացաւտներից միայն մէկին կարելի էր լինում աղատել։ Բարակացաւը մինչ այժմ իմացւում էր աուսկուլտացիայի միջոցով, բայց միայն քիչ բժիշկներ կան, որոնք կարող են լաւ աուսկուլտացիա կատարել։ Այդ պատճառով եթէ Կոխի եղանակով անվրէպ կերպով ճանաչուեն տուբերկել-բացիլները, այդ արդէն շատ կարևոր է։

Նաև դր. Սէ ընդունում է Կոխի բժշկական եղանակի նշանակութիւնը, միայն կարծում է, թէ դեռ շատ կէտեր կան պարզելու՝ 1) Կոխը ազատում է միայն փչացրած հիւսուածքը, բայց միկրոբներին չի սպանում, 2) Նրան թւում է թէ Կոխի դիագնոզը այնքան անվրէպ չէ, ինչպէս Կոխը ասում է, 3) Նա վախենում է թէ հիւանդութիւնը կրկին կարող է նորոգուել։ Զը նայած դորան, Կոխի միջոցը կարող է շատ լաւութիւն անել և նորա մեթոդը բացում է հետազօտութեան համար հեռու ճանապարհ։ Դ-ր Գրանշէ, որը ինքը տուբերկուլոզի ուսումնասիրութիւնով զբաղուած է, պնդում է, որ լուպուսը յաճախ բուժուել է, նոյնպէս բուժուել է մի թոքախտ բարակացաւտ առաջին շրջանում. նոյնպէս լիմֆ-գանգլիաների, ոսկորների և յօդակապերի տուբերկուլոզը արդէն խիրուրգիան շատ անդամ բժշկել է։ Կասկածելի է թւում նրան, որ Կոխի դիւտը սպասած մեծ յաջողութիւնը ունենայ։

ՊՐՈՖԵՍՈՐ Դ-Ր ՅԻՄՍԵՆ Դ-Ր ԿՈԽԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ։

Միւնխէն, 19 Նոյեմբերի։

Դաղանի խորհրդական պրոֆ. դ-ր Յիմսեն այսօր իւր կլինիկում առաջին տնդամ դասախօսեց՝ Բերլինից վերադառնալուց դէս և յայտնեց իւր տպաւորութիւնները Կոխի բուժական եղանակից, որ նա տեսաւ Բերլինում։ «Ալդեմայնէ Յայտունգ» լրագրում տպած է դասախօսութեան մասին սղագրական հետևեալ տեղեկութիւնը։ Մեր էքսպեդիցիայի ժամանակ, ասաց նա, մենք մի քանի հարիւր հիւանդ տեսանք, որոնք նոր ժամանակներում խնամուած էին։ Ամենաերկար ժամանակը 6 շաբաթ էր, որովհետև առաջին փորձերը սկսել են միայն օդոստոսին։ Երկու-երեք դէպքեր այդ ժամանակուանից է և այն էլ դոքա խիրուրգիական դէպքեր են։ Այն դէպքերը,

որ մեզ նախ և առաջ հետաքրքրում են, ներքիններն են, մանաւանդ թոքերինը և դրա միայն 6 շաբաթուանից են սկսել փորձի ենթարկուել։ Առաջին փորձերը պատկանում են դ-ր Ֆրենցելին։ Նորա հետ մենք երկուշաբթի, երեկոյեան խօսեցինք։ Այդ դէպքերը մեզ վերայ լաւ տպաւորութիւն են անում։ Եթէ բժշկած լինելու մասին դեռ խօսք չը կայ, բայց հիւանդները ջերմից ազատուել են. խորիսը, եթէ բոլորովին չի էլ դադարել, դոնէ նշանաւոր կերպով պակասել է։ Տուբերկել—բացիլների թիւը և յատկութիւնը փոխուել է, այն. անդամ մի քանի օրերում չը գտուեց ոչ մէկը։ Եթէ Կոխը ասում է, թէ իւր հեղուկը ամենևին չի ներգործում բացիլների վերայ, ես սակայն տեսայ, որ բացիլները մի փոքր հիւանդոտ երևացին։ Այդ մենք պարզ տեսանք մանրադիտական պրեպարատների վերայ։ Բացիլները մասամբ կոտրատուած և լղարած էին, իսկ միքանիսը բոլորովին ընկած էին. կարծ՝ բացիլները այն տեսքն ունէին, կարծես թէ մի հիւանդութիւն երկար ժամանակ նրանց յաղթահարած լինէր։ Հիւանդների մարմնի քաշը 4 ֆունտ աւելացել էր միմիայն 6 շաբաթում։ Նշանակութիւն ունի այն, ինչպէս պրոֆ. Ֆրենցելը չեշտեց, որ յառաջացած բարակացաւի դէպքում, մանաւանդ երբ մեծ խոռոչներ են գոյացել, Կոխի հեղուկի ներմուծութիւնը ոչ մի յաջողութեան շանս չունի։ Դ-ր Գերհարտը մէկէջ օրը կէս օրից առաջ սկսեց՝ ներմուծութիւններ անել և այսօրուայ տեղեկութիւնների համեմատ՝ նա երէկ ներկայացրել է դէպքերը և, որպէս սովորապէս, նաև այդտեղ ընդդիմադրութիւնը (ռէակցիա) տեղի է ունեցել։ Ամենագեղեցիկ կերպով տեսնում են հետևանքները խիրուրգիական դէպքերում՝ լուպուսի, խոլերի վերայ և այլն։ Ընդդիմադրութիւնը շատ շուտով, սովորապէս 5 մինչ 6 ժամից յետո տեղի է ունենում։ Ընդհանուր երևոյթներից դուրս, որպէս գլխացաւ, փոխումն և այլն, մենք տեսնում ենք տեղային երևոյթներ, այն է՝ ուռչել, ցաւ և բորբոքումն այն ամենի, ինչ տուբերկուլոզային է։ Այդ տեղային երևոյթները դիտողին ամենից շատն են զարմացնում։ Մենք դէպքեր տեսանք, գլխաւոր շտաբի բժիշկ Կոհլերի մօտ, ուր մարմնի զանազան տեղերում ընդդիմադրութիւն տեղի ունեցաւ։ Այսպէս տեսայ մի հիւանդուհի երկու սպիներով (Narbe), մէկը ծունկից ներքև (Unterschenkel), անում էր բոլորովին սիֆիլիտական վէրքի տպաւորութիւն, մինչդեռ երկրորդը վզի վերայ էր և ակնայտնի էր, որ տուբերկուլոզային ծագում ունէր։ Ներմուծութիւնից յետո հէնց միայն վզի վրայինը ցոյց տուեց մի ընդդիմադրութիւն (ռէակցիա), մինչդեռ միւսը բոլորովին ընդդիմադրութիւնից զուրկ մնաց։ Այդ կողմից շատ համոզիչ էր խուչափողի կարցինոմի (Kehlkopfcarcinom) մի դէպք, որ ես Բերգմանի հետ հետազօտեցի։ Մենք, այն է Բերգման, Կոխ, երկու անգլիացիք (սրա իրանց հետ բերել էին մի լուպուս—հիւանդի), գաղտնի խորհրդական Գրաֆ և ես, որոնում էինք ամենայարմար դէպքերը ներմուծութեան համար Բերգմանի կլինիկում. Կոխը

որոշում էր հեղուկի չափը իւրաքանչիւր դէպքի համար։ Կոխը շատ մատչելի էր և շատ աշխատածի դէմք ունէր։ Չափերը որոշելում Կոխը շատ զգուշ էր, նա տալիս էր միայն շատ փոքր չափերով։ Չէ թէ դէպքեր են եղել, երբ ընդդիմադրութիւնը շատ զօրեղ է եղել։ Այսպէս, օրինակ, Բերմանը ցոյց տուեց մի դէպք, ուր ընդդիմադրութեան ջերմը (Reactionsfieber) մինչ 41.,, աստիճանի հասաւ և այն միայն 0.,1 խորանարդ սանտիմետրի չափով։ Մենք տեսանք լնտոլ ուրիշ հիւանդներ, որոնք բժշկւում էին և արդէն 8—11 ներմուծութիւններ էին ընդունել, և այդ շատ հետաքրքրական էր։ Բերդմանի մօտ հետաքրքրական դէպքեր կան և մենք որոնեցինք ու գտանք թոքերի և խուշափողի տուբերկուլոզի երեք դէպք և բացի դորանից՝ վերը վիշած կասկածաւոր դէպքը։ Վերջինս մի 40 տարեկան մարդ էր, որի ձախ ձայնակապը (Stimmband) հաստացել էր և ներմուծութիւն էր պահանջում։ Այդ մարդը կերկերած և համարեա առանց ձայնի էր։ Բերդմանը քաղցկեղի (ռակ) տեղ ընդունեց այդ։ ես էլ նոյն կարծիքի էի։ Բայց կործանման ոչմի նշոյլ չէր երեւում։ Մենք ներմուծութիւն արեցինք և երեկոյեան նա կրկին մեզ ներկայացրուեց։ Ընդդիմադրութեան ոչ մի նշոյլ չը կար և հիւանդի դրութիւնը ոչնչով չէր փոխուել, մինչդեռ տուբերկուլոզային հիւանդները, չը նայած որ աւելի փոքր չափս էին ընդունել, խիստ երեւոյթներ ցոյց տուին։ Մենք հետաղօտեցինք վերջիններիս և մի շատ մեծ օդդէմ գտանք, մէկը մինչև անգամ ստերիզոր ունէր։ Ես տեսայ, որ 5 միլիգրամ հեղուկը արդէն զօրեղ ընդդիմադրութիւն է առաջացնում, և մենք տեսանք նոյնպէս, որ այդ ընդդիմադրութիւնը ոչ մի վատ հետեւանք չի ունենում։

Տարօրինակ թւաց ինձ թոքը։ Մինչդեռ խուշափողում ընդդիմադրութիւնը կատարւում էր, թոքի մէջ ոչինչ չէր նկատելի։ Պէտք էր կարծել, որ երբ խուշափողը այդպէս ուռչում է, պէտք է որ բրոնխերն էլ նոյնպէս ընդդիմադրեն. բայց մենք ոչ մի հետք չը գտանք։

Ինձ շատ հետաքրքրեց լուպուսը։ Մենք 12 մինչ 13 դէպք տեսանք։ Ընդդիմադրութիւնը այդտեղ սաստիկ մեծ էր։ Ամբողջ շրջանը ուռչում է, որպէս նաև հարեան մասերը, որոնց մասին կարծում էր թէ իբր բոլորովին առողջ էին։ Նշանակում է որ Կոխի հեղուկի ներգործութիւնը մտնում է բացիլների բնական ամենախորը ծակ ու ծուկերը։ Ուռուցքը ահագին էր։ (Մենք այստեղ բաց ենք թողնում մի քանի տողեր)։

Կոխի մեթոդը շատ հասարակ է։ Երբ մի անգամ դիտական վերաստուգութեան փորձերը վերջացրած կը լինեն, այն ժամանակ ամեն բժիշկ կարող է անել։ Դա մի հասարակ ներմուծութիւն է։

Պրոֆ. Ցիմսեն վերջացրեց հետեւեալ խօսքերով։ «Կոխի հեղուկի ընդունակութիւնը՝ միմիայն տուբերկուլոզ հիւսուածքի վերայ ներգործել, պաթօլոգիայում առանց օրինակի է. դա անբացատրելի է և կարող է միայն այն ժամանակ բացատրուել, երբ մենք կ'իմանանք, ինչպէս և ինչ բաղադրութիւնից է պատրաստւում հեղուկը և ինչ յարաբերութիւն ունի հեղուկը դէպի բացիլները։